

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

### Համաձայնեցված մակրոտնտեսական քաղաքականություն անցկացնելու մասին

#### I. Ընդհանուր դրույթներ

1. Սույն Արձանագրությունը մշակված է «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի 62-րդ եւ 63-րդ հոդվածների համաձայն (այսուհետ՝ Պայմանագիր) եւ դրանով սահմանվում է անդամ պետությունների կողմից համաձայնեցված մակրոտնտեսական քաղաքականություն անցկացնելու մասին կարգը:

2. Սույն Արձանագրության մեջ օգտագործվող հասկացություններն ունեն հետեւյալ իմաստը՝

«կանխատեսումների արտաքին պարամետրեր»՝ ցուցանիշներ, որոնք բնութագրում են անդամ պետությունների տնտեսության զարգացման վրա էական ազդեցություն գործող արտաքին գործոնները եւ օգտագործվում են անդամ պետությունների սոցիալ-տնտեսական զարգացման պաշտոնական կանխատեսումը մշակելու ժամանակ.

«կանխատեսման արտաքին պարամետրերի միջակայքային քանակական արժեքներ»՝ կանխատեսման արտաքին պարամետրերի ինտերվալի վերին եւ ներքին արժեքներ.

«մակրոտնտեսական ցուցանիշներ»՝ ցուցանիշներ, որոնք բնութագրում են անդամ պետության տնտեսության վիճակը, նրա զարգացումը եւ անբարենպաստ գործոնների ազդեցության հանդեպ կայունությունը, ինչպես նաեւ ինտեգրացիոն համագործակցության աստիճանը.

«Միության տնտեսական զարգացման հիմնական ուղղություններ»՝ խորհրդատվական բնույթի փաստաթուղթ, որով սահմանվում են սոցիալ-տնտեսական զարգացման հեռանկարային ուղղությունները, որոնց իրականացմանն են ձգտում անդամ պետությունները՝ Միության ինտեգրացիոն ներուժի օգտագործման եւ անդամ պետությունների մրցակցային առավելությունների հաշվին՝ յուրաքանչյուր անդամ պետության կողմից լրացուցիչ տնտեսական ազդեցություն ստանալու նպատակով.

«անդամ պետությունների մակրոտնտեսական քաղաքականության հիմնական կողմնորոշիչներ»՝ ծրագրային փաստաթուղթ, որով սահմանվում են անդամ պետությունների տնտեսության համար առավել կարեւոր կարճաժամկետ եւ միջնաժամկետ խնդիրները, ուղղված Միության տնտեսական զարգացման հիմնական ուղղություններով սահմանված նպատակների իրագործմանը, ինչպես նաեւ որի մեջ ներառվում են նշված խնդիրների լուծմանն ուղղված առաջարկությունները:

#### II. Համաձայնեցված մակրոտնտեսական քաղաքականության հիմնական ուղղությունների իրականացում

3. Համաձայնեցված մակրոտնտեսական քաղաքականության հիմնական ուղղությունների իրականացման նպատակով անդամ պետությունները՝

1) համաձայնեցնում են միջոցներ, որոնք ուղղված են Միության ինտեգրացիոն ներուժի եւ անդամ պետությունների մրցակցային առավելությունների օգտագործմանը տնտեսության այն բնագավառներում եւ ճյուղերում, որտեղ դա անհրաժեշտ է կամ նպատակահարմար.

2) համաձայնեցված մակրոտնտեսական քաղաքականություն անցկացնելու ժամանակ հաշվի են առնում Միության տնտեսական զարգացման հիմնական ուղղությունները, անդամ պետությունների մակրոտնտեսական քաղաքականության հիմնական կողմնորոշիչները.

3) մշակում են անդամ պետությունների սոցիալ-տնտեսական զարգացման պաշտոնական կանխատեսումները՝ հաշվի առնելով կանխատեսման արտաքին պարամետրերի միջակայքային քանակական արժեքները.

4) Պայմանագրի 63-րդ հոդվածում նշված տնտեսական զարգացման կայունությունը որոշող մակրոտնտեսական ցուցանիշների քանակական արժեքների շրջանակներում անցկացնում են համաձայնեցված մակրոտնտեսական քաղաքականություն.

5) Հանձնաժողովի մասնակցությամբ մշակում եւ իրականացնում են միջոցներ, այդ թվում՝ համատեղ միջոցներ, եթե որեւէ անդամ պետության տնտեսական զարգացման կայունությունը որոշող մակրոտնտեսական ցուցանիշները չեն համապատասխանում Պայմանագրի 63-րդ հոդվածում նշված քանակական արժեքներին, ինչպես նաեւ, անհրաժեշտության դեպքում, հաշվի են առնում Հանձնաժողովի՝ տնտեսական վիճակի կայունացմանն ուղղված առաջարկությունները՝ Հանձնաժողովի կողմից հաստատված կարգին համապատասխան.

6) անդամ պետություններում առաջացած տնտեսական իրավիճակին վերաբերող հարցերի շուրջ անցկացնում են խորհրդատվություններ՝ տնտեսության կայունացմանն ուղղված առաջարկություններ մշակելու նպատակով:

### **III. Հանձնաժողովի իրավասությունները**

4. Հանձնաժողովը համակարգում է անդամ պետությունների կողմից համաձայնեցված քաղաքականության անցկացումը հետեւյալ կերպ՝

1) մակրոտնտեսական ցուցանիշներ, որոնցով որոշվում են Հանձնաժողովի կողմից հաստատված մեթոդիկայի համաձայն հաշվարկված՝ անդամ պետությունների տնտեսական զարգացման կայունությունը եւ դրանց՝ Պայմանագրի 63-րդ հոդվածում սահմանված քանակական արժեքների հետ համապատասխանությունը մոնիթորինգի միջոցով.

սույն Արձանագրության IV բաժնում սահմանված տնտեսական զարգացման մակարդակի եւ դինամիկայի ցուցանիշների ու ինտեգրման աստիճանի ցուցանիշների մոնիթորինգի միջոցով.

2) Բարձրագույն խորհրդի կողմից հաստատվող հետեւյալ փաստաթղթերի՝ անդամ պետությունների հետ համաձայնեցում մշակելու միջոցով՝

միության տնտեսական զարգացման հիմնական ուղղությունները.

անդամ պետությունների մակրոտնտեսական քաղաքականության հիմնական կողմնորոշիչները.

տնտեսական իրավիճակի կայունացմանն ուղղված համատեղ միջոցներ՝ անդամ պետությունների կողմից Պայմանագրի 63-րդ հոդվածում նշված տնտեսական զարգացման կայունությունը սահմանող մակրոտնտեսական ցուցանիշների քանակական արժեքները գերազանցելու դեպքում.

3) տնտեսական զարգացման կայունությունը որոշող՝ Պայմանագրի 63-րդ հոդվածում նշված մակրոտնտեսական ցուցանիշների քանակական արժեքները անդամ պետությունների կողմից գերազանցելու դեպքում տնտեսական վիճակի կայունացմանն ուղղված առաջարկությունները մշակելու միջոցով.

հաստատված կանխատեսումների արտաքին պարամետրերի միջակայքային քանակական արժեքների հիման վրա՝ Միության սոցիալ-տնտեսական զարգացման կանխատեսումները վերլուծական (տեղեկատվական) նպատակներով մշակելու միջոցով,

4) տնտեսության կայունացմանն ուղղված առաջարկություններ մշակելու համար անդամ պետություններում առաջացած տնտեսական իրավիճակին վերաբերող հարցերի շուրջ խորհրդատվություն անցկացնելու աջակցություն մշակելու միջոցով,

5) անդամ պետությունների սոցիալ-տնտեսական զարգացման պաշտոնական կանխատեսումը նախապատրաստելու համար Հանձնաժողովի կողմից հաստատված կանխատեսման արտաքին պարամետրերի միջակայքային քանակական արժեքների վերաբերյալ անդամ պետությունների հետ համաձայնություն մշակելու միջոցով,

6) անդամ պետությունների տնտեսավարող սուբյեկտների տնտեսական գործունեության եւ ձեռնարկատիրական ակտիվության պայմանների նկատմամբ ընդունվող որոշումների ազդեցության վերլուծության միջոցով,

անդամ պետությունների մակրոտնտեսական հիմնական կողմնորոշիչների համապատասխանության մասով համաձայնեցված մակրոտնտեսական քաղաքականության միջոցների վերլուծության միջոցով,

7) համաձայնեցված մակրոտնտեսական քաղաքականություն անցկացնելու նպատակով անդամ պետությունների եւ լիազոր մարմինների միջեւ տեղեկատվության փոխանակման վերլուծության միջոցով: Նման փոխանակման կարգը սահմանում է Հանձնաժողովը:

#### **IV. Ինտեգրման աստիճանի, տնտեսության զարգացման մակարդակի եւ դինամիկայի, կանխատեսումների արտաքին պարամետրերի ցուցանիշները**

5. Ինտեգրման աստիճանը որոշելու համար օգտագործվում են հետեւյալ ցուցանիշները՝

1) յուրաքանչյուր անդամ պետության տնտեսությանն ուղղված ազգային ներդրումների, այդ թվում՝ անմիջական ներդրումների ծավալը (ԱՄՆ դոլարով),

2) յուրաքանչյուր անդամ պետության կողմից ազգային տնտեսություն մուտք եղած ներդրումների, այդ թվում՝ անմիջական ներդրումների ծավալը (ԱՄՆ դոլարով),

3) անդամ պետության արտահանման ընդհանուր ծավալի մեջ յուրաքանչյուր անդամ պետության մասնաբաժինը (տոկոսներով),

4) անդամ պետության ներմուծման ընդհանուր ծավալի մեջ յուրաքանչյուր անդամ պետության մասնաբաժինը (տոկոսներով),

5) անդամ պետության ներմուծման ընդհանուր արտաքին առետրի շրջանառության մեջ յուրաքանչյուր անդամ պետության մասնաբաժինը (տոկոսներով),

6. Տնտեսության զարգացման մակարդակը եւ դինամիկան որոշելու համար օգտագործվում են հետեւյալ ցուցանիշները՝

1) համախառն ներքին արդյունքի աճի տեմպերը (տոկոսներով),

2) բնակչության մեկ անձի համար համախառն ներքին արդյունքը՝ ըստ գնողունակության պարիտետի (ԱՄՆ դոլար),

3) վճարային հաշվեկշռի ընթացիկ հաշվի հաշվեկշիռ (ԱՄՆ դոլարով եւ համախառն ներքին արդյունքի տոկոսներով),

4) ազգային արժույթի իրական արդյունավետ փոխարժեքի ինդեքս՝ հաշվարկված սպառողական գների ինդեքսի հիման վրա (տոկոսներով):

7. Հանձնաժողովն անդամ պետությունների համաձայնությամբ կարող է որոշում կայացնել անդամ պետությունների ինտեգրման աստիճանի, զարգացման մակարդակի եւ դինամիկայի ցուցանիշների այլ մոնիթորինգ անցկացնելու մասին՝ սույն Արձանագրության համապատասխանաբար 5-րդ եւ 6-րդ կետերում նշված ցուցանիշներից տարբերվող:

8. Անդամ պետությունները եռամյա ժամանակահատվածի համար համաձայնեցնում են կանխատեսման հետեւյալ արտաքին պարամետրերի միջակայքային քանակական արժեքները՝

համաշխարհային տնտեսության զարգացման տեմպերը,

«Brent» ապրանքանիշի նավթի գինը:

Գործադիր իշխանության մարմինները, որոնք լիազորված են կազմելու անդամ պետությունների սոցիալ-տնտեսական զարգացման պաշտոնական կանխատեսումները, փոխանակվում են նաեւ արտաքին առետրային գործառնությունների վիճակի մասին տեղեկատվությամբ, այդ թվում՝ փոխադարձ առետրի ոլորտում: Առանձին անդամ պետությունների սոցիալ-տնտեսական զարգացման պաշտոնական կանխատեսումը ձեւավորելու համար Ռուսաստանի Դաշնությունը նշված լիազոր մարմիններ է ներկայացնում ներքին սպառման համար մատակարարվող բնական գազի կանխատեսվող արժեքի կողմնորոշիչ միջակայքի փոփոխության մասին տեղեկատվություն՝ Հանձնաժողովի կողմից հաստատված կարգով:

Ռուսաստանի Դաշնության կողմից մակրոտնտեսական կանխատեսման նպատակով տրամադրվող նշված տեղեկատվությունը կանխատեսված ժամանակաշրջանում անդամ պետություններին բնական գազի մատակարարման գնի՝ Ռուսաստանի Դաշնության պարտավորություն չէ:

Անդամ պետությունների (ազգային) կենտրոնական բանկերը տեղեկացնում են միմյանց անցկացվող դրամավարկային քաղաքականության մասին:

9. Մակրոտնտեսական կանխատեսման նպատակով կատարվող տեղեկատվության փոխանակումն իրականացվում է՝ հաշվի առնելով համապատասխան տեղեկատվության գաղտնիության՝ անդամ պետությունների պահանջները:

10. Բարձրագույն խորհուրդը կարող է որոշում կայացնել անդամ պետությունների սոցիալ-տնտեսական զարգացման պաշտոնական կանխատեսումը մշակելու ժամանակ օգտագործվող կանխատեսման արտաքին պարամետրերը վերանայելու մասին:

---